ՇՈՒՇԻԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ 15-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎ

Աստիճանաբար ամրապնդվում է Արցախում պատմամշակութաբանական տարբեր թեմաների շուրջ գիտաժողովների անցկացումը, որին մասնակցում էին Հայաստանի, Արցախի և Սփյուռքի գիտության ու մշակույթի բազմաթիվ գործիչներ: Իբրև համագործակցության գիտագործնական դրսևորում՝ նման միջոցառումներն արժևորվում են ոչ միայն համահայկական, այլև միջազգային փոխշփումների համատեքստում: Հաջողված փորձը, անշուշտ, շարունակություն էր ենթադրում, և այն չուշացավ:

Հունիսի 21-ին Շուշիի Դ. Ղազարյանի անվան երաժշտական դպրոցում մեկնարկեց Արցախի վարչական, գիտակրթական ու հոգևոր-մշակութային վաղեմի կենտրոն Շուշի քաղաքի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովը: Ներկայացուցչական այս միջոցառումը կազմակերպվել էր ՀՀ կրթության և գիտության նախարարության, ԼՂՀ կրթության, մշակույթի և սպորտի նախարարության, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի, ԵՊՀ և ԱրՊՀ ռեկտորներ Ա-րամ Սիմոնյանի *ու* Համլետ Գրիգորյանի *ջանքերով: Լիազումար նիստին ներկա էին Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ* Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, *ԼՂՀ ԱԺ նախագահ* Աշոտ Ղուլյանը, *փոխվարչապետ* Արարատ Դանիելյանը, *ԼՂՀ կրթության, մշակույթի, սպորտի և պաշտպանության նախարարներ, պաշտոնատար այլ անձինք:*

Արցախի թեմի առաջնորդի օրհնությունից և բարեմաղթանքներից հետո Կրթության մշակույթի և սպորտի (ԿՄՍ) նախարար Կ. Աթայանը *ներկայացրեց ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանի ուղերձը գիտաժողովի մասնակիցներին: Ներկաներին ողջունեց նաև ԼՂՀ ԱԺ նախագահ* Աշոտ Ղուլյանը: *ԼՂՀ ԿՄՍ նախարար* Կ. Աթայանի *ողջույնի խոսքից հետո հանդես եկավ ԵՊՀ ռեկտոր* Ա. Սիմոնյանը՝ *նշելով, որ Արցախում գիտաժողովների կազմակերպումն արդեն ավանդույթ է դառնում: Շուշիի անցյալի հերոսական դրվագներից հետո ներկա զարգացումներին անդրադարձավ ԱրՊՀ ռեկտոր Հ.* Գրիգորյանը՝ *վստահեցնելով, որ ինչպես 15 տարի առաջ, այսօր էլ արցախահայությունն ամուր է իր իրավունքների պաշտպանության մեջ:*

Գիտաժողովի մասնակիցներին իրենց խոսքով դիմեցին ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Բաբկեն Հարությունյանը *և Կալիֆորնիայի համալսարանից՝ ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ* Ռիչարդ Հովհաննիսյանը: *«Շուշին Լեռնային Ղարաբաղի համար պայքարում, 1917–1921 թթ.» զեկուցման մեջ վերջինս հրապարակեց արցախահայության պահանջատիրության արդարացիությունը հավաստող մի շարք փաստաթղթեր, որոնք պահվում են Հայաստանի և Անգլիայի արխիվներում ու առաջնահերթ համարելով արխիվային նյութերի և Ղարաբաղի Ազգային*

խորհրդի գործունեության ուսումնասիրությունը՝ վստահեցրեց, որ պատմության դասերից ամենաուսանելին «ի վերջո, բռունցքն է, որ հաղթում է»: Հայոց բռունցքված բանակի, նրա դերի արժեւորմամբ հանդես եկավ ԼՂՀ Պաշտպանության նախարար և պաշտպանության բանակի հրամանատար, գեներալ-լեյտենանտ Մովսես Հակոբյանը՝ *զեկուցելով Շուշիի ազատագրման ռազմագործողության ու բանակաշինության արդի ձեռքբերումների մասին:*

Գիտաժողովի առաջին լիագումար նիստն ավարտվեց Դ. Ղազարյանի անվան երաժշտական դպրոցի սաների պատրաստած համերգային ծրագրով: Երկրորդ լիագումար նիստն ու մասնախմբային աշխատանքները շարունակվեցին ևս երկու օր՝ Արցախի պետական համալսարանի համապատասխան լսարաններում: Այստեղ առաջին՝ Արա Սանջյանի *զեկուցումը նվիրված էր Լեռնային Ղարաբաղին՝ 1923–1987թթ. (ԱՄՆ, Միչիգանի համալսարան), իսկ երկրորդը՝ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն* Ռուբեն Սաֆրաստյանի՝ *ղարաբաղյան զարգացումների մասին մանրամասնող «Շուշիի ազատագրումը և Թուրքիան» զեկուցումն էր, որը լսվեց ակնհայտ հետաքրքրությամբ:*

Հունիսի 22–23-ը գիտական նստաշրջանն իր աշխատանքը ծավալեց չորս մասնախմբերում՝ ա) պատմության, բ) հայ ազգային-ազատագրական պայքարի և բանակաշինության XIX–XX դարերում. հայկական բանակ, գ) հնագիտության և ազգագրության, դ) արվեստի և գրականության: Գիտաժողովում ընդգրկված 49 զեկուցումները վերաբերում էին Շուշի քաղաքի պատմաժողովրդագիտական, մշակութաբանական, ազգային-ազատագրական և հարակից այլ հարցերի լուսաբանմանը: Օրակարգի թեմատիկ բազմազանությունը վկայում էր բովանդակային առումով խորքային ընդգրկում ունեցող նստաշրջանի գիտագործնական առաքելության մասին: Պատմության մասնախմբի չորս նիստերում (համանախագահներ՝ Բաբկեն Հարությունյան, Ռիչարդ Հովհաննիսյան, Աշոտ Մելքոնյան, Պավել Չոբանյան, Արա Սանջյան, Էդուարդ Դանիելյան, Ռուբեն Սաֆրաստյան, Ալիկ Ղարիբյան) *առաջինը* Հենրիկ Սվազյանի *(ՀՀ ԳԱԱ ՊԻ) զեկուցումն էր «Խորենացիական ավանդազրույցը Սիսակ-Առանյան ճյուղի մասին և նրա պատմական ատաղձը» թեմայով, որտեղ վիպական և պատմական աղբյուրների միջոցով հիմնավորվում էին առաջադրված հարցերը: «Հայոց Արևելից կողմանց վարչական բաժանումն ըստ «Աշխարհացույցի» զեկուցման մեջ հանգամանալից խոսքով հանդես եկավ անվանի պատմաբան* Բաբկեն Հարությունյանը *(ԵՊՀ): «Աշխարհացույցի» հիման վրա Կենտրոնական Արցախի Հարջլանք և Պիանք գավառների տեղադրության հարցին էր նվիրված* Ալեքսան Հակոբյանի *զեկուցումը (ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ): Նույն ինստիտուտի առաջատար գիտաշխատող* Ազատ Բոզոյանը *ներկայացրեց «Աղվանից աթոռը Հայոց եկեղեցու նվիրապետական համակարգում (ըստ Ժ դարի վավերագրերի)» զեկուցումը: Փարիզի բյուզանդագիտական ինստիտուտի գիտաշխատող Կոստանդին Յուկերմանի (Քոլեջ դե ֆրանսի) «Խազարների արշավանքները VIII դարում դեպի Արցախ» զեկուցման մեջ արծարծվեցին տվյալ ժամանակաշրջանում Արցախի պատմության հետ առնչվող մի շարք կարևոր հարցեր: «Պատմագիր Հակոբ Չաքարյանի տեղե-*

կությունները Շուշիի մասին» բանախոսության մեջ Արտակ Մաղալյանը *(ՀՀ ԳԱԱ ՊԻ) Հ. Զաքարյանի 1853 թ. գրած «Պատմութիւն գաւառին Արցախու» աշխատության հիման վրա (որի բնագիրը անցյալ տարի հրատարակվել է Վիեննայի «Հանդես ամսօրյա» հայագիտական ուսումնաթերթում զեկուցողի առաջաբանով և ծանոթագրություններով), ներկայացրեց պատմագրի հաղորդած տեղեկությունները Շուշի քաղաքի մասին:* Էդուարդ Լ. Դանիելյանի *(ՀՀ ԳԱԱ ՊԻ) «Հայ առաքելական լուսավորչական եկեղեցու դիմագրավումը բողոքական քարոզչությանը Շուշիում (1827–1835 թթ.)» զեկուցումը, ինչպես հուշում է վերնագիրը, նվիրված էր վերոհիշյալ տարիներին Շուշիում, եկեղեցու կողմից բողոքական քարոզչությանն ուղղված միջոցառումներին, իսկ նույն ինստիտուտի գիտաշխատակից* Հովհաննես Ալեքսանյանի *«Շուշիի և Ղարաբաղի հայ ազգաբնակչությունը 1916–1926 թթ.» զեկուցման մեջ հեղինակը ներկայացրեց մինչև 1917 թ. հեղափոխությունը Շուշի քաղաքի, գավառի և Լեռնային Ղարաբաղի հայության թիվն ըստ ցարական, անգլիական և հայկական տվյալների: Ընդամենը մեկ տասնամյակի ընթացքում (1916–1926 թթ.) պատուհասվում և կոտորվում է Շուշիի և համանուն շրջանի հայությունը:* Վահան Մելիքյանի *(ՀՀ ԳԱԱ ՊԻ) «Ղարաբաղը 1917 թ. ինքնակալության տապալումից հետո (1917 թ. մարտ -հոկտեմբեր)»,* Տիգրան Սարուխանյանի *(Բրիտանական գրադարան) «Մեծ Բրիտանիան և Ղարաբաղի հարցը (1918–1920 թթ.)»,* Ալիկ Ղարիբյանի *(ԵՊՀ) «Շուշիի 1920 թ. կոտորածը» բանախոսություններում քննվեցին 1917–1920 թթ. Անդրկովկասում տեղի ունեցած ռազմաքաղաքական իրադարձությունների հետևանքները, անգլիական հրամանատարության ազատարար առաքելության վերաբերյալ դարաբաղցիների հավատի խարխլումը: Նստաշրջանում մեծ ուշադրության արժանացավ արխիվային փաստաթղթերով հագեցած* Գայանե Մախմուրյանի *(ՀՀ ԳԱԱ ՊԻ) վերոհիշյալ թեմային առնչվող «Ղարաբաղ-Զանգեզուր նահանգապետությունը և բրիտանական քաղաքականությունը (1918–1920թթ.)» զեկուցումը, որտեղ հեղինակը ներկայացրեց ոչ միայն Ղարաբաղի հանդեպ բրիտանական կոշտ վարքագիծը՝ նրան Ադրբեջանին ստորադրելու և Բաքվին ենթակա ընդարձակ գեներալ-նահանգապետություն ստեղծելու նպատակով, այլև վերլուծեց նման դիրքորոշման պատճառները՝ պայմանավորված ՀՀ-ի՝ արտաքին վտանգին ինքնուրույնորեն դիմակայելու անհնարինությամբ, պահի հրամայականի ծավալով Ղարաբաղին օգնելու անկարողությամբ ու նորաստեղծ Հանրապետության դեպի Արևմտյան Հայաստան խոստացած ընդլայնմամբ, որոնք նույնպես ազդել են երկրամասը Հայաստանից անջատելու որոշման վրա: Պատմության մասնախմբի չորրորդ և վերջին նիստում ընդգրկված* Պավել Չոբանյանի *(ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ) «Արցախի ինքնորոշման իրավունքի պատմամշակութային նախադրյալները» զեկուցման մեջ բանախոսը հանգամանորեն վերլուծեց քննության առարկա հիմնախնդրին առնչվող իրական հիմքերը, իսկ* Մխիթար Գաբրիելյանի *(ՀՀ ԳԱԱ ՀԱԻ) «Վերաբնակությունը որպես հասարակական-մշակութային գործընթաց. Շուշի քաղաքի օրինակով» զեկուցումը նվիրված էր 1996–2002 թթ. Շուշիում գրառված ազգագրական նյութերի հիման վրա վե-*

բաբնակեցման ընթացքում դրսևորվող սոցիալ-հոգեբանական ու մշակութային առանձնահատկություններին:

Գիտաժողովի երկրորդ մասնախմբի առաջին նիստում լսվեցին Հայկազ Հովհաննիսյանի *(ԵՊՀ) «Շուշեցի գեներալ- ադյուտանտը. Հովհաննես Լազարյան»,* Թամարա Վարդանյանի *(«Նորավանք» կենտրոն) «1905–1906 թթ. ընդհարումներն Անդրկովկասում. Շուշիի հերոսական կռիվները»,* Հրանտ Աբրահամյանի *(ՀՀ - ԳԱԱ ՊԻ) «Երեք դրվագ Շուշիի պատմական ճակատագրից (20-րդ դար)» զեկուցումները: «Շուշին հայ ազգային-ազատագրական շարժման մեջ (XIX դարի վերջ – XX դարի սկիզբ)» բանախոսության մեջ* Էմմա Կոստանդյանը *(ՀՀ ԳԱԱ ՊԻ) քննեց զինատար խմբերում Շուշիի ռեալական և թեմական դպրոցների աշակերտների ունեցած ներդրումը հայ ազգային-ազատագրական շարժման մեջ: Ռազմական գործի երախտավորներին և բանակաշինության գործընթացներին էր նվիրված* Կլիմենտ Հարությունյանի *(ՀՀ ԳԱԱ ՊԻ) «Ավիացիայի մարշալը. Արմենակ Խանփերյանց»,* Հայկ Դեմոյանի *(ՀՀ ԳԱԱ Ցեղասպանության թանգարան-ինստիտուտ) «Ղարաբաղյան պատերազմը և նեոպանթուրքիզմը (1991-2003 թթ.)»,* Էդիկ Մինասյանի *(ԵՊՀ) «Հայաստանի Երրորդ Հանրապետության ազգային բանակի կազմակերպման և բանակաշինության առանձնահատկությունները»,* Մհեր Հարությունյանի *(«Կաճառ» գիտական կենտրոն) «Շուշիի ազատագրումը և ԼՂՀ զինված ուժերի կազմավորումը» զեկուցումները: XIX դարում ծավալված համընդհանուր առաջադիմական շարժման մեջ Շուշիի նշանակալից դերին էին նվիրված* Մելանյա Բալայանի *(ԱրՊՀ) «Շուշիի վերածումը Ղարաբաղի հոգևոր կենտրոնի»,* Վահրամ Բալայանի *(ԱրՊՀ) «Հայագիտությունը Շուշիում 19-րդ դարում և նրա զարգացման միտումները» զեկուցումները:* Արտակ Դաբաղյանի *(ՀՀ ԳԱԱ ՀԱԻ) «Շուշիի հասարակական կյանքն ըստ «Կովկասյան տարեգրքի» զեկուցումը ներկայացնում էր 1850–1916 թթ. Կովկասի փոխարքայի գրասենյակի կողմից հրատարակված պաշտոնական տեղեկությունները Շուշի քաղաքի հասարակական կյանքի, քաղաքային վարչության, արտադրական ձեռնարկությունների, բնակչության էթնիկական կառուցվածքի մասին, որոնք ամբողջությամբ վերցրած հարստացնում են Շուշիի՝ որպես Այսրկովկասի հարավի խոշորագույն քաղաքային կենտրոնի վերաբերյալ մեր գիտելիքները:* Աղասի Թադևոսյանը *(ՀՀ ԳԱԱ ՀԱԻ) «Հումանիտար մշակույթի էթնիկական առանձնահատկությունները Շուշվա գավառում XIX դ. վերջին» բանախոսության մեջ քննում է Շուշիում գրահրատարակչական, գիտակրթական, մշակութային կյանքի զարգացման մեջ տարբեր էթնիկական խմբերի մասնակցության խնդիրը. ցույց է տրվում, որ այդ գործընթացներում գլխավոր ու հիմնական դերակատարությունն իրականացրել է հայ հանրությունը:* Էսթեր Խեմչյանի *(ՀՀ ԳԱԱ ՀԱԻ) «Ժողովրդագիտական նյութերի հավաքման ու հրատարակման պատկերը Շուշի քաղաքում (XIX դարի 60-ական թվականներից մինչև XX դարի 60-ական թվականները)» զեկուցման մեջ բանախոսի դիտարկումները վկայում են, որ մեկ հարյուրամյակի ընթացքում նվիրյալ հայ մտավորականների մի խումբ (Առաքել, Գրիգոր և Ալեքսանդր Բահաթրյան եղբայրներ, Երվանդ Լալայան, Խաչիկ Դաղյան, Կ. Մելիք-Շահնազարյան, Մարգարիտ Գրիգորյան-Սպանդարյան)*

Շուշի քաղաքից հավաքել ու կուտակել է ժողովրդագիտական ինքնատիպ ու արժեքավոր նյութեր, որոնց գիտական հետազոտությունը դեռևս ըստ արժանվույն կատարված չէ: Սվետլանա Վարդանյանի *(ՀՀ ԳԱԱ ՀԱԻ) «Բանահյուսական նյութերի կենցաղավարումը Շուշիի շրջանում (ըստ 1970 թ. գրառված նյութերի)» զեկուցումը տարածաշրջանի կյանքի ու կենցաղի, ժողովրդական խոսք ու գրույցի, բառ ու բանի պահպանման, ժամանակի ու տարածության ներազդեցությամբ դրանցում իրականացված տեղաշարժերի բնականոն գործընթացների մասին էր: Բանահյուսական տարաբնույթ սյուժեների ու մոտիվների համեմատական վերլուծությամբ ցույց էր տրվում, որ դրանք տեղական յուրահատկություններով հանդերձ՝ համահայկական ու միջազգային զուգահեռ տարբերակներում իրենց ուրույն տեղն են գրավում: Արցախյան ազատամարտում շիրակցիների մասնակցությանն էր նվիրված* Ա. Վ. Մաթևոսյանի *և* Վ. Ա. Մաթևոսյանի *(Գյումրիի պետական մանկավարժական ինստիտուտ) համազեկուցումը:* Ժակ Մանուկյանը *(ԵՊՀ) անդրադառնալով «ՀՀ–ՎՈՒԱՄ փոխհարաբերությունների և ԼՂ հիմնախնդրին», իսկ* Կարինե Սահակյանը *(ՀՀ ԳԱԱ Շիրակի ՀՀ կենտրոն) ազգային հոգեկերտվածքի համատեքստում քննեց Շուշիի ազատագրման իրողությունը:*

Հնագիտության և ազգագրության մասնախմբի զեկուցումների մի շարք նվիրված էր Շուշիի հնագիտական պեղումներին: Աշոտ Հարությունյանի *(Պատմաերկրագիտական թանգարան) «Շուշիի հնագիտական գոտու նորահայտ խաչքարերը»,* Արտակ Գնունու *(ԵՊՀ) «Քաշաթաղի Կերեն գյուղի պեղումների արդյունքները»,* Հակոբ Սիմոնյան, Հովհաննես Սանամյան *համազեկուցողների «Արցախի և ազատագրված տարածքների 1990–2001 թթ. պեղումների արդյունքները» բանախոսությունները հետաքրքիր տեղեկություններ էին հաղորդում վերոհիշյալ վայրերի հնագիտական հետազոտությունների մասին:* Նորա Ենգիբարյանի *(ՀՀ ԳԱԱ ՀԱԻ) և* Մանուշակ Տիտանյանի *(Ստեփանակերտի քաղաքապետարան) «Շուշիի հնագույն մշակույթն ըստ հնագիտական պեղումների» զեկուցման մեջ համաբանախոսները ներկայացրին Շուշիի երկաթեղարյան երկու դամբարանների պեղումների արդյունքները: Առանձնակի հետաքրքրությամբ լսվեց ԵՊՀ մշակութաբանության ամբիոնի վարիչ* Համլետ Պետրոսյանի *և* Վարդգես Սաֆարյանի *(ԱրՊՀ) «Միջնադարյան Շուշին ըստ հնագիտական հետազոտությունների» զեկուցումը, որտեղ ներկայացվեցին Հայ-հունական և Հին հանգստարանների հետախուզական պեղումների, Կարկառի ամրոցի, Շուշվա սղնախի հայտնաբերման և պեղումների արդյունքները:* Արտակ Ղուլյանը *(ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ) զեկուցեց «Շուշիի մելիքական ապարանքների», իսկ* Արմեն Սարգսյանը *(ԱրՊՀ)՝ անկախության տարիներին Շուշիում մշակույթի զարգացման մասին:*

Արվեստի և գրականության մասնախմբում լսվեց 11 զեկուցում: «Շուշիի Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցու ճարտարապետությունը» (ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Մուրադ Հասրաթյան*, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ) հաղորդեց, որ թեև Շուշիի Ս. Ամենափրկիչ եկեղեցին նախագծվել է՝ կրկնելով Էջմիածնի Մայր տաճարի ծավալատարածական հորինվածքը, սակայն ունի էական տարբերություն: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն* Արարատ Աղասյանը *«Նկարիչ Ստեփա-*

նոս Ներսիսյանը Շուշիում» զեկուցման մեջ անդրադարձավ հասարակական ու մանկավարժական աշխատանքով ծանրաբեռնված արվեստագետի՝ Շուշիում ստեղծած դիմանկարներին և ավետարանական թեմաներով գործերին («Լեռնցի» կամ «Տղամարդը ծխամորճով», գեներալ Մովսես Զաքարի Արղության-Երկայնաբազուկի դիմանկարը և Հիսուս Քրիստոսի պատկերը): Նույն ինստիտուտի փոխտնօրեն Աննա Ասատրյանի *«Դանիել Ղազարյանը՝ հայրենի Շուշիում» զեկուցումը նվիրված էր կոմպոզիտոր, խմբավար, մանկավարժ, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Դ. Ղազարյանի կյանքի ու գործունեության՝ Շուշիի հետ կապված ժամանակաշրջաններին:* Հրավարդ Հակոբյանի *(Մատենադարան) «Շուշիի մատենագիտական ժառանգությունը» բանախոսությունը նվիրված էր Շուշիում կատարված նկարագրդ մատյանների արվեստին, որոնցից առավել ուշագրավը 1868 թ. կազմված Մատենադարանի -10107 ժողովածուն է, որի գրիչը և նկարիչը բնիկ շուշեցի Անդրեաս Մուսաելյանն էր, որը միջնադարյան մատենական նկարչության ավանդույթները համատեղել է XIX դ. նոր արվեստի և տեղական ազգագրական նախասիրությունների հետ:* Թամար Հայրապետյանի *(ՀՀ - ԳԱԱ ՀԱԻ) «Թատերական կյանքը Շուշիում (19-րդ դարի երկրորդ կես և 20-րդ - դարի առաջին տասնամյակներ)» զեկուցման մեջ ներկայացվում էր Շուշիի մշակութային միջավայրը, որտեղ թատրոն հաճախելը եղել է «անհրաժեշտ սոցիալական վարքագիծ»՝ իսկ* Գրիգոր Օրդոյանի *(Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ) «Շուշիի Խանդամիրյան թատրոնը» բանախոսության մեջ արժևորվում էր 1891 թ. հիմնադրված և 16 տարի շարունակ ազգային թատրոնի ավանդույթները պահպանած Շուշիի Խանդամիրյան թատրոնը՝ իբրև արևելահայ թատերական նշանավոր կենտրոններից մեկը, որը, ցավոք, հրո ճարակ դարձավ 1905 թ. հայ բնակչության կոտորածների ու քաղաքի հրդեհման ժամանակ: «Երկու մեծ շուշեցիներ. Մուրացան և Արսեն Տերտերյան». այսպիսի վերնագիր ուներ ԵՊՀ հայ գրականության ամբիոնի վարիչ* Սամվել Մուրադյանի *զեկուցումը, որտեղ բանախոսը, ամենևին էլ չանտեսելով մյուս երևելի շուշեցիների վաստակը, Մուրացանի և Ա. Տերտերյանի մեծությանը համարժեք ներկայացրեց նրանց պատկառելի մշակութային ժառանգությունը:* Արտեմ Հարությունյանը *(ԵՊՀ) «Հրկիզված Շուշի (1920) քաղաքը Օսիպ Մանդելշտամի պոեզիայում» բանախոսության մեջ բանաստեղծական հախուռն ներշնչանքով և պատմաճանաչողական զուգադիր համեմատություններով ներկայացրեց 1920 թ. հրկիզված Շուշիի սահմռկեցուցիչ տեսարանները: ՀՀ ԳԱ Շիրակի ՀՀ կենտրոնի գիտաշխատողներ* Կարինե Բազեյանի *և* Հասմիկ Հարությունյանի *զեկուցումներից առաջինը նվիրված էր Շուշիի ասեղնագործական դպրոցին, իսկ երկրորդը՝ Ալեքսանդրապոլ–Շուշի երաժշտական աղերսներին: Նստաշրջանի եզրափակիչ՝ երրորդ նիստի վերջին զեկուցումը ամերիկահայ գրականագետ* Գևորգ Բարդակչյանի *մտորումներն էր՝ խորհրդային շրջանի արցախյան գրականության վերաբերյալ: Նստաշրջանում ներկայացված զեկուցումները լայնորեն քննարկվեցին հարցերի, մտքերի փոխանակության կարգով: ՀՀ ԳԱԱ ՊԻ տնօրեն* Աշոտ Մելքոնյանը *հատկապես կանգ առավ Կ. Յու-*

կերմանի ելույթի վրա՝ զարմանք հայտնելով, թե նա որքան է խորացել Արցախի և մասնավորապես Աղվանից պատմության դժվարին հարցերում:

Հունիսի 23-ին Արցախի պետական համալսարանի մեծ դահլիճում տեղի ունեցավ գիտաժողովի եզրափակիչ լիագումար նիստը: Մասնախմբերի ղեկավարները հաղորդեցին քննարկումների մասին: Ամփոփելով գիտաժողովի արդյունքները՝ ԵՊՀ ռեկտոր ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Սիմոնյանն *այն համոզմունքը հայտնեց, որ գիտաժողովի նիստերում հնչած զեկուցումները կարևոր կռվաններ են Արցախի հայ հանրության ազգային հայրենիքի պատմության վերահաստատման գործում:*

Գիտաժողովի շրջանակներում իրականացվեցին պատմաճանաչողական այցեր (Գանձասար, Տիգրանակերտ): ՀՀ ԳԱԱ ՀԱԻ Արցախի արշավախմբի ղեկավար, պատմական գիտությունների դոկտոր Համլետ Պետրոսյանը *գիտաժողովի մասնակիցներին ներկայացրեց Հայոց արքա Տիգրան Մեծի (95-55 թթ. մ. թ. ա.)՝ իր իսկ անունով Արցախում հիմնած Տիգրանակերտ քաղաքի պեղումների արդյունքները:*

ԹԱՄԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ